

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<ՕՒԻ>> մարտի 2018թ
ք. Եղեգնաձոր

N 18


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 89 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի <<ա>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով <<Սոցիալական աջակցության>> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 38-րդ հոդվածի 2-րդ մասը, 2018 թվականի փետրվարի 13-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018թ. N25-Ն հրամանը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 05.10.2015թ. <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Եղեգնաձորի և Վայքի տարածքային գործակալությունների կանոնադրությունները հաստատելու մասին>> թիվ 89 որոշմամբ հաստատված թիվ 1 և թիվ 2 հավելվածների ամբողջ տեքստում <<սպասարկող>> բառերը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել՝ <<սատարող>> բառերով և դրանց համապատասխան հոլովածներով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ.ՍԱՐԳՍՅԱՆ